

ՌՈՒՐԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱԼ

ԹՈՒՐԹԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ (2001 թ.)

ԱՄՆ-ի դեմ ուղղված 2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական գործողությունները սկիզբ դրեցին կարևոր ու բազմաբնույթ փոփոխությունների միջազգային հարաբերությունների համակարգում: Թերևս, դրանցից ամենակարևորներից է Ռուսաստանի ընդկրկումը ԱՄՆ-ի զլխավորած հակաահաբեկչական կռալիցիայի մեջ, որը հաստատուն կերպով մատնանշում է այն փաստը, թե որքան խորը փոփոխություններ են կրել Արևմուտքի և Ռուսաստանի հարաբերությունները «սառը պատերազմից» հետո: Ավելի ընդարձակ, պատմական հեռանկարի առումով, այս փոփոխությունները նշանակում են ևս մեկ քայլ հետսառըպատերազմյան աշխարհաքաղաքական կարգի ձևավորման ուղղությամբ:

Ներկա ճգնաժամը, լինելով, ըստ էության, զլոբալ, տարածքային առումով նախ և առաջ ծավալվում է Եվրասիայում և այս հանգամանքի շնորհիվ ներգրավում է իր ոլորտի մեջ՝ որպես կարևոր դերակատարներ նաև այդ տարածաշրջանի պետությունները: Ընթացող գործընթացներում Թուրքիային վերապահված կարևոր դերակատարությունը պայմանավորված է Եվրասիայում նրա քաղաքական, տնտեսական ու ռազմական կշիռով ու ներգրավվածության աստիճանով, ինչպես նաև այն հանգամանքով, որ այդ երկիրը պատմական, մշակութային, կրոնական ու էթնիկական կապեր ունի տարածաշրջանի շատ ժողովուրդների հետ:

Մինչ այժմ ռազմական գործողությունները ընթացել են Թուրքիայի սահմաններից հեռու և ներկա փուլում դեռևս պարզ չէ, թե Թուրքիան առաջիկա ամիսների, հավանաբար նաև տարիների ընթացքում ինչպիսի դեր է ունենալու միջազգային ահաբեկչության դեմ ծավալվող պայքարում: Անկախ ապագա զարգացումների արդյունքներից, կարելի է կանխատեսել,

Ռուբեն Սաֆրաստյանը պատմ. գիտ. թեկնածու է, ՀՀ նախագահին կից ԱԱԽ-ի աշխատակազմի աշխատակից (1991-1996թթ.), Գերմանիայում ՀՀ դեսպանատան խորհրդական (1996-1997), ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի վարիչ (1998-ից), «Հումբոլդտ» (1999) և «Ֆուլբրայթ» (2002) ծրագրերի ստիպենդիանտ:

որ սույն հակամարտությունը փոփոխություններ է մտցնելու եվրասիական և արևմտյան երկրների հետ Թուրքիայի հարաբերություններում և անգամ կարող է նպաստել աշխարհաքաղաքական մոր կարգի ձևավորման ընթացքում Թուրքիայի դերակատարության շրջանակների վերասահմանմանը:

I

Եվրասիան 1990-ականների Թուրքիայի քաղաքական մտքում ու քաղաքականության մեջ. աշխարհաքաղաքական պատկերացումներ և քաղաքական մոտեցումներ

Ինչպես արդեն նշել էինք, ընթացող ճգնաժամի գլխավոր թատերաբեմը Եվրասիան է: Այդ պատճառով իմաստ ունի անդրադառնալ այդ հասկացողության ընկալումներին ու մեկնաբանություններին ժամանակակից Թուրքիայի քաղաքական ու գիտական շրջանակներում: 90-ական թվականների սկզբից «Եվրասիա» հասկացողությունը կարևոր տեղ է զբաղեցնում Թուրքիայում ընթացող քաղաքական քննարկումներում: Այն ընկալվում է որպես հիմնական կոնցեպցիա, որը ուրվագծում է Թուրքիայի աշխարհաքաղաքական ռազմավարությունը, միջազգային հարաբերությունները և ազգային անվտանգությունը: Չնայած դրա կենտրոնական բնույթին կամ գուցե նաև դրա հետևանքով «Եվրասիա» հասկացողությունը մեծապես քաղաքականացված է և գիտական առումով անորոշ սահմանված: Որոշ քաղաքագետներ և գիտնականներ Եվրասիան համարում են գլխավորապես թյուրքական ժողովուրդներով բնակեցված տարածաշրջան, որի մեջ են մտնում Թուրքիան, Բալկանների ու Կովկասի մի մասը, Միջին Ասիայի նախկին խորհրդային հանրապետությունները, Ռուսաստանի Վոլգայի շրջանը և Հյուսիսային Աֆղանստանը: Նման մոտեցումները, որոնք, ըստ էության, հանդիսանում են պանթյուրքիզմի գաղափարախոսության «արդիականացված» խմբագրություններ, լայն տարածում գտան թուրքական վերնախավի ամենատարբեր շրջանակներում, մանավանդ՝ 1990-ական թվականների սկզբին: Նրանց տուրք տվեց մույնիսկ այնպիսի սովորաբար զգուշավոր քաղաքական գործիչ, ինչպիսին Մուլեյման Դեմիրելն է: 1992 թ. սկզբին, այսինքն՝ Խորհրդային Միության փլուզումից դեռ մեկ ամիս էլ չանցած, նա, զբաղեցնելով վարչապետի պաշտոնը, ազդարարեց «հսկայական Թյուրքական Աշխարհի» ծնունդը, որի սահմանները, ըստ նրա, ձգվում են Ադրիատիկ ծովից մինչև Չինաստան¹:

Սակայն այս էթնիկական-ծագումնաբանական սկզբունքի վրա հիմնված սահմանումը հետագայում՝ 1990-ական թթ. կեսերից սկսած,

կորցրեց իր մենաշնորհը և ներկայումս ավելի քիչ է տարածված, քան բացառապես քաղաքական պատկերացումների վրա հիմնված Եվրասիայի բնորոշման այլ տարբերակները: Դրանցից առաջինը, հետևելով ներկայումս Արևմուտքի և Արևելքի որոշ երկրներում տարածում գտած տեսություններին, որոնք գտնում են, որ «սառը պատերազմի» տարիներին գոյություն ունեցած «Կապիտալիստական Արևմուտք – Սոցիալիստական Արևելք» հակամարտությունը ներկայումս փոխարինվել է «Հարուստ Հյուսիս – Աղքատ Հարավ» հակամարտությամբ, Եվրասիան բնութագրում է որպես «Հարավ»՝ ի հակադրումն հարուստ և զարգացած «Հյուսիսի»: Երկրորդ տարբերակի կողմնակիցները Եվրասիայի շրջանակների մեջ ներառում են միայն Հարավային Կովկասի և Միջին Ասիայի ութ նորանկախ պետությունները:

Քաղաքական շրջանառության մեջ է դրված մաս Եվրասիայի զուտ աշխարհագրական բնորոշումը, որը ամկա է, օրինակ, Թուրքիայի ԱԳՆ-ի վերսայի վրա՝ «Եվրոպայից Միջին Ասիա ձգվող ընդարձակ լանդշաֆտ»²: Ըստ էության, այդպիսով փորձ է արվում խուսափել հասկացությունը քաղաքականացնելու մեղադրանքներից: Այնուամենայնիվ, թուրք դիվանագետների հետ շուրջ մեկ տասնամյակի ընթացքում մեր բազմաթիվ հանդիպումները թույլ են տալիս եզրակացնել, որ իր առօրյա գործունեության ընթացքում թուրքական դիվանագիտությունը մախրնտրում է հենվել ոչ թե պաշտոնական սահմանման վրա, այլ օգտագործում է այն խիստ քաղաքականացված տարբերակը, որը Եվրասիայի շրջանակները սահմանփակում է վերոհիշյալ ութ նորանկախ պետություններով: Առաջին հայացքից զուտ վերացական հետաքրքրություն ներկայացնող Եվրասիայի սահմանների բնորոշման խնդիրը խորքում ունի կարևոր նշանակություն՝ ներկա ճգնաժամի ընթացքում Թուրքիայի քաղաքականության շարժառիթները բացահայտելու տեսակետից:

Եվրասիայի կոնցեպցիան, որը կենտրոնականներից է գեոպոլիտիկայի բնագավառում, Թուրքիայում սկսել է ուսումնասիրվել միայն վերջերս՝ տարածաշրջանային աշխարհաքաղաքական միջավայրի նշանակալի փոփոխությունների հետևանքով: Թուրք տեսաբանները, օգտագործելով արևմտյան դասական գեոպոլիտիկ մոտեցումները (Հ. Ջ. Մակինդերից մինչև Ջ. Բժեզինսկի), փորձել են ստեղծել իրենց ուրույն կոնցեպցիաները:

Դրանցից ամենաուշագրավն ու ամբողջականն է Ռամազան Օզեյի կողմից (Մսրմարայի համալսարան) առաջ քաշած աշխարհաքաղաքական կոնցեպցիան: Այն կրում է «Թուրքերի գերիշխանության տեսություն» վերնագիրը³: Օզեյի կոնցեպցիայի հիմնական տարրերը կարելի է ամփոփել հետևյալ կերպ. Անատոլիան աշխարհի «միջնաբերդն» է (kale) և Անատոլիայում իշխող երկիրը՝ Թուրքիան, տիրապետելով այդ

միջնաբերդին, հնարավորություն ունի իր հսկողության տակ առնել «ներքին շրջանակի» տարածաշրջանները, որոնք են, ըստ թուրք գիտնականի, Բալկանները, Մերձավոր Արևելքը և Եվրասիան: Ավելին՝ այդ «ներքին շրջանակի» վրա իշխող պետությունը՝ Թուրքիան, վաղ թե ուշ կառավարելու է աշխարհը, եզրակացնում է հեղինակը: Այսպիսով՝ Օգեյը օրինականացնում է Եվրասիայում Թուրքիայի գերիշխանությունը՝ համարելով այն այդ երկրի աշխարհագրության բնական արդյունք: Ավելի հեռու գնալով՝ նա Եվրասիայում Թուրքիայի գերիշխանությունը դիտում է ոչ թե որպես ինքնապատասխան, այլ ավելի մեծ արդյունքի հասնելու միջոց: Թուրք գեոպոլիտիկների այլ հրապարակումները այսքան ուղղամիտ չեն և այսքան հեռուն չեն գնում, սակայն նրանց մեծ մասը նույնպես պաշտպանում է Եվրասիայում Թուրքիայի գերակայության գաղափարը դիմելով ավելի «նուրբ» ձևակերպումների: Այսպես, օրինակ, Մուսթաֆա Յըլմազը (Հաջեթեփե համալսարան) նույնպես բնութագրում է Թուրքիան որպես «բնական միջնաբերդ», որը գտնվում է Բալկանների, Կովկասի և Մերձավոր Արևելքի կենտրոնում, ինչը նրան հնարավորություն է տալիս կիրառելու «մի շարք երկընտրանքային տնտեսական, քաղաքական ու ռազմական» քաղաքական մոտեցումներ⁴:

Թուրքիայի՝ «բնական» աշխարհաքաղաքական պայմաններից բխող գերակշռող դերը ընդգծելու նպատակով 1990-ական թվականներին գիտական և քաղաքական շրջանառության մեջ է դրվել նաև մեկ այլ հասկացություն՝ «կենտրոնական տերություն»: Համաձայն այդ մոտեցման ջատագովներից Օրալ Սամդերի՝ Թուրքիան, զիջելով իր հզորությանը մի շարք այլ պետությունների և ենթարկվելով «գլոբալ զարգացումների» ազդեցությանը, միաժամանակ, շնորհիվ իր «կենտրոնական տերություն» դիրքի, ինքն է ներազդում այդ զարգացումների վրա⁵:

Թուրքական ժամանակակից աշխարհաքաղաքական ու քաղաքական մտքի մանրամասն հետազոտումը և քննական վերլուծությունը, լինելով ինքնըստինքյան կարևոր գիտական խնդիր, դուրս է սույն հոդվածի շրջանակներից: Անդրադարձը վերը նշված օրինակներին նպատակ ունի միմյան խտացրա՞ց ձևով ներկայացնել հիմնական միտումները, որոնք ընկալվում և օգտագործվում են տարբեր ուղղվածության քաղաքական ու հասարակական ուժերի կողմից որպես տեսական աջակցություն քաղաքական բանավեճերում ու քննարկումներում, հիմք հանդիսանալով կոնցեպտուալ բնույթի մոտեցումների ձևավորման համար: Անդրադառնանք նրանցից կարևորների բնութագրմանը:

1990-ականներին Թուրքիայի ձախ մտավորականներն ու քաղաքական գործիչները, ինչպես նաև իսլամամետ շատ ուժեր ձևակերպեցին Թուրքիայի եվրասիական քաղաքականության մի այնպիսի տարբերակ,

որն, ըստ էության, իրենից ներկայացնում է լիարժեք այլընտրանք «ավանդորդեն» արևմտամետ բնութագրվող քեմալիստական արտաքին քաղաքական ռազմավարությանը: Այս մոտեցման հիմքում դրված է «արևմտյան իմպերիալիզմի» դեմ եվրասիական գլխավոր տերությունների՝ Թուրքիայի, Իրանի ու Ռուսաստանի համագործակցության գաղափարը: Այս տեսակետն առաջ քաշողները քննադատում են Թուրքիայի արտաքին քաղաքականությունը Արևմուտքի շահերին ստորադաս լինելու և երկրի բուն շահերը անտեսելու համար: Նրանք հանդես են գալիս որպես Թուրքիայի՝ Արևմուտքից անկախ արտաքին քաղաքականության կողմնակիցներ: Նրանց թվում են ինչպես ձախ, այնպես էլ իսլամամետ մտավորականների և քաղաքական շրջանակների նշանավոր ներկայացուցիչներ: Թուրքիայի սոցիալիստական շարժման վետերան Դոդու Փերինչեքը, որը պաշտպանում է վերահիշյալ տեսակետը, իր գրքերից մեկի համար չափազանց բնորոշ վերնագիր է ընտրել՝ «Եվրասիայի ընտրությունը»⁶: Թուրքիայի համար անկախ արտաքին քաղաքականություն⁶:

Ժամանակակից Թուրքիայի քաղաքական և մտավորական էլիտան, այնուամենայնիվ, հիմնականում արևմտամետ է և հավատարիմ է մնում Աթաթյուրքի ռազմավարական մախրընտրությանը: Նրա այդ թևի ներկայացուցիչները պրագմատիկ են և քաջատեղյակ, որ Թուրքիան տնտեսապես և քաղաքականապես դեռևս պատրաստ չէ Եվրասիայում միակ քաղաքական գերիշխող ուժի վերածվել: Այդ պատճառով նրանք Թուրքիայի արտաքին քաղաքականության եվրասիական ուղղությունը համարում են Թուրքիա-Արևմուտք հարաբերություններին ստորադաս և ձգտում են Եվրասիայում իրենց քաղաքականությունը կոորդինացնել Արևմուտքի՝ մասնավորապես ԱՄՆ-ի մպատակների հետ: Միաժամանակ նրանք եվրասիական տարածաշրջանում Թուրքիայի ազդեցության տարածումը կարևոր հաղթաթուղթ են համարում Արևմուտքի հետ այնպիսի հարցերի սակարկման գործում, ինչպիսին է, օրինակ, Եվրոպական Միությանը Թուրքիայի լիիրավ անդամակցությունը կամ Կիպրոսի խնդիրը:

Եվրասիայի վերաբերյալ թուրք բարձրաստիճան ազդեցիկ զինվորականների աշխարհաքաղաքական և գեոստրատեգիական տեսակետների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք շատ ընդհանրություններ ունեն վերևում նշված արևմտյան ուղղվածության էլիտայի հայացքների հետ: Ձինվորականությունը Եվրասիան և մախ և առաջ Հարավային Կովկասը դիտում է որպես Թուրքիայի անվտանգության համար վտանգ ներկայացնող անկայուն տարածաշրջան: Վտանգի հիմնական աղբյուրնա համարում է Ռուսաստանի ազդեցությունը և ռազմական ներկայությունը այդ տարածաշրջանում⁷: Այսպիսով՝ ակնհայտ է, որ զինվորականության ուշադրությունը գլխավորապես կենտրոնացած է Հարավային

Կովկասի հրեք հանրապետությունների վրա: Միաժամանակ, նրանք, ինչպես նաև շատ և շատ թուրքական քաղաքական գործիչներ, գտնում են, որ, ինչպես նշել է հանգստի կոչված զեներալ-լեյտենանտ Սադի Էրզյուվենչը, «Թուրքիան գտնվում է աշխարհի կենտրոնում»⁸:

Վերջին երկու-երեք տարիների ընթացքում թուրք բարձրաստիճան զինվորականության շրջանում երևան է եկել ամերիկամետ սպաներից բաղկացած մի խմբավորում, որը միաժամանակ ընդդիմանում է ԵՄ-ի հետ ինտեգրացմանը: Նրանք Եվրասիան դիտում են ոչ թե անկայունության աղբյուր, այլ որպես Թուրքիայի համար կարևոր աշխարհաքաղաքական առավելություն: Չնայած իրենց արևմտամետ կողմնորոշմանը՝ նրանք այդ տարածաշրջանում կանխատեսում են ուժեղ մրցակցություն եվրոպական տերությունների և հատկապես Գերմանիայի հետ: Այս եզրակացությանը է հանգել, օրինակ, 1998 թ. Թուրքիայի ռազմական ակադեմիաների կողմից կազմակերպված սեմինարին ներկայացված իր զեկուցման մեջ զնդապետ Նազմի Չիզմեչին⁹:

Ներկայիս կռալիցիոն կառավարությունում ԱԳՆ-ն գտնվում է ժողովրդավարական Չախ Կուսակցության (ԺՉԿ) հսկողության տակ, ուստի հատուկ ուշադրություն անհրաժեշտ է դարձնել այդ կուսակցության ղեկավարների հայացքներին: Ընդհանուր առմամբ նրանք պաշտպանում են Թուրքիայի արտաքին քաղաքականության արևմտյան ուղղվածության ռազմավարությունը, սակայն անում են որոշ վերապահումներ: Օրինակ՝ 1995 թ. ներկայիս վարչապետ և ԺՉԿ-ի առաջնորդ Բյուլենթ Էջևիթը հանդես էր եկել «Ռեզիտմալ ուղղվածության արտաքին քաղաքականություն» վարելու առաջարկով: Նա գտնում է, որ ապագայում, օգտագործելով Եվրոպայի ու Ասիայի տարրերը, հնարավոր կլինի ստեղծել Եվրասիայի գերտարածաշրջանի պետություններից բաղկացած ընդհանրություն, իհարկե, Թուրքիայի ղեկավարությամբ: Այդ ինտեգրացման գործընթացները նկարագրելու մպատակով նա մույմիսկ առաջարկել է օգտագործել հատուկ տերմին՝ avrasyalasma – եվրասիականացում¹⁰:

Արտգործնախարար Իսմայիլ Ջենը, որը մույմպես ներկայացնում է ԺՉԿ-ն, չի խուսափում հրապարակայնորեն և ամենայն հստակությամբ բացահայտել Թուրքիայի հեռում գնացող պլանները: Այսպես, օրինակ, ժամանակին նա հայտարարել էր. «Մենք, անտարակույս, կանդամակցենք Եվրոպական Միությանը, սակայն մեր տեսադաշտը ավելի ընդարձակ է: Մեր մպատակն է դառնալ Եվրասիայում որոշումներ կայացնող կենտրոն»¹¹:

Վերևում քննարկված տեսական մոտեցումները ու դատողությունները Եվրասիայի վերաբերյալ, որոնք լայն տարածում են ստացել ժամանակակից Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում, պարզորոշ

վկայում են, որ այդ տարածաշրջանում Թուրքիայի գերիշխանության գաղափարը այս կամ այն հիմնավորմամբ, կիսում են երկրի ինչպես քաղաքական, այնպես էլ ռազմական ու գիտական էլիտաները: Նշենք մաև, որ երկրի բնակչության լայն խավերը նորանկախ պետություններում Թուրքիայի գերիշխանության հաստատումը ընկալում էին, ինչպես գրում են հետազոտողներ Բյուլենթ Գյոքայը և Ռիչարդ Լանգհոունը, որպես հնարավորություն «վերագտնելու անցյալի իրենց մեծությունը»¹²:

1990-ական թվականներին Թուրքիան փորձեց իրականացնել Եվրասիայում իր գերիշխանության հաստատման երազանքը: Նա չափազանց ակտիվ էր այդ տարածաշրջանում: Սակայն գործադրած մեծագույն ջանքերը հիմնականում ապարդյուն անցան, թուրքական դիվանագիտությանը չհաջողվեց հասնել ցանկալի արդյունքների: Նա փաստորեն կրեց ծանր պարտություն Կենտրոնական Ասիայում և արձանագրեց միայն սահմանափակ ձեռքբերումներ Կովկասում¹³: 1990-ականների վերջում – 2000-ականների սկզբում շատ թուրք մասնագետների ու քաղաքական գործիչների համար պարզ դարձավ, որ Թուրքիան չի հասել տարածաշրջանում ղեկավար դեր ստանձնելու իր գլխավոր ստրատեգիական նպատակին: Սկսվեցին մոր քաղաքական գծի փնտրտուքները¹⁴:

II

Թուրքիայի արտաքին քաղաքականությունը 2001թ. հետսեպտեմբերյան ճգնաժամի ընթացքում

Մեյստեմբերի 11-ի ահաբեկչական հարձակման ու դրա դեմ ԱՄՆ-ի հավանական վտխվրեժի կապակցությամբ Թուրքիայի առաջին արձագանքը բնագոյային զգուշավորության բնույթ էր կրում: Թուրքիան պաշտոնապես հայտարարեց, որ Վաշինգտոնն ու Անկարան միջազգային ահաբեկչության դեմ պայքարում ունեն ընդհանուր շահեր՝ հրաժարվելով ԱՄՆ-ին օգնելու կոնկրետ խոստումներից: ԱՄՆ-ի հետ համագործակցելու Թուրքիայի վերոհիշյալ հայտարարությունը կատարվել էր NATO-ի կողմից հաստատված կոլեկտիվ գործողությունների կոնտեքստում՝ հենվելով Հյուսիսատլանտյան պայմանագրի V հոդվածի վրա: Ըստ այդ հոդվածի փոխադարձ պաշտպանությանը վերաբերող կետի՝ դաշինքի անդամ որևէ երկրի վրա հարձակման դեպքում անդամ բոլոր երկրները վերջինիս պետք է պաշտպանեն: Ավելի պարտավորեցնող քայլերից Թուրքիայի ղեկավարությունը սկզբնական փուլում խուսափում էր. Այս

կապակցությամբ հատկանշական է արտգործնախարար Ջեմի հայտարարությունը. «Այս նոր իրավիճակում թուրք ժողովրդի անվտանգությունը ավելի կարևոր է, քան որևէ այլ բան»¹⁵:

Ուշագրավ է, որ ահաբեկչության դեմ ԱՄՆ-ի պատասխան գործողությունների կապակցությամբ ամերիկացի և թուրք բարձրաստիճան պաշտոնյաների շփումները սկսվեցին բավականին ուշ, ինչը որոշ թուրք մեկնաբանների կարծիքով վկայում է, որ ներկայիս Թուրքիայի ղեկավարությունը չի վայելում ԱՄՆ-ի լիովին վստահությունը: Պետքարտուղար Քոլին Փաուելը Ջեմին հեռաձայնեց միայն սեպտեմբերի 17-ին՝ տեղեկացնելու համար ԱՄՆ-ի գործողությունների հետագա ծրագրի մասին: Միայն դրանից հետո Թուրքիայի ղեկավարները հնարավորություն ունեցան ավելի ճշգրիտ հաշվարկել իրենց քաղաքականությունը արագ փոփոխվող իրավիճակում:

Աֆղանստանում հակաահաբեկչական գործողություններ ծավալելու ԱՄՆ-ի որոշման նկատմամբ Թուրքիայի ղեկավարության առաջին հրապարակային արձագանքը մտավախությունն էր առ այն, որ դա կարող էր բացասական հետևանք ունենալ միջինասիական պետությունների համար: Ավելի ուշ Թուրքիայի Գլխավոր Սպայակույտի (ԳՄ) պետ Հյուսեյն Քըվրքքոլուն մի քանի անգամ զգուշացրեց ԱՄՆ-ին՝ Աֆղանստանի լեռներում կռվելու մպատակով չուղարկել ցամաքային զորամիավորումներ, ասելով, թե «այնտեղ ուղարկված ուժերը կորստի են մատնվելու»¹⁶: Նրա ոչ պաշտոնական արտահայտություններն այդ թեմայով ավելի կտրուկ էին. Աֆղանստանում ցանկացած ցամաքային գործողություն հավասարազոր է «խելացնորության»¹⁷:

Չնայած այդ վերապահումներին՝ Թուրքիան, այնուամենայնիվ, հայտնեց իր սկզբունքային պատրաստակամությունը օժանդակել ԱՄՆ-ին հակաահաբեկչական պատերազմում: Թուրքիայի ղեկավարության հիմնական մտահոգությունն այն էր, թե ինչ ձև է ընդունելու այդ մասնակցությունը: Ըստ երևույթին, քննարկվում էին այնպիսի տարրերակներ, որոնք չէին նախատեսում ուղղակի մասնակցություն ռազմական գործողություններին: Սեպտեմբերի 27-ին արված վարչապետ Էջևիթի հայտարարության համաձայն՝ քաղաքների դեմ ռազմական գործողություններին մասնակցելու մպատակով Աֆղանստան թուրքական ստորաբաժանումներ ուղարկելու հարց «օրակարագում չկա»¹⁸:

Թե կոնկրետ ինչ աջակցություն պատրաստ էր տրամադրել այդ փուլում Թուրքիան ԱՄՆ-ին հայտնի դարձավ ԳՄ պետի տեղակալ Յաշար Բյույուքաբադինի հայտարարությունից, որով նա, ի դեպ, հանդես եկավ այն մույն օրը, երբ Վաշինգտոնում Ջեմը հանդիպում էր Փաուելի հետ, այդպիսով տեղյակ պահելով ԱՄՆ-ի ղեկավարությանը Թուրքիայի

բարձրագույն զինվորականության ղեկավարման մասին: Նա մասնավորապես հայտնեց, թե Թուրքիան ԱՄՆ-ի հետ «կփոխանակի իր ինֆորմացիան ու պատկերացումները և կհամագործակցի անվտանգության բոլոր բնագավառներում»: Այլ կերպ ասած, դա նշանակում էր, որ ԱՄՆ-ի պատրաստ էր ԱՄՆ-ին տրամադրել անհրաժեշտ հետախուզական ինֆորմացիա և մասնակցել հակաթալիբյան Հյուսիսային դաշինքի՝ մասնավորապես գեներալ Դոստումի (վերջինս սերտ կապեր ունի Թուրքիայի հետ, իսկ 1998 թ. Հյուսիսային Աֆղանստանից վճռվելուց հետո երեք տարի վտարանդիության մեջ է ապրել Թուրքիայում) ուժերը վարժեցնելու և սպառազինելու գործում:

Վաշինգտոնում Ջեմի հանդիպումներից հետո Թուրքիան համաձայնվեց ԱՄՆ-ին տրամադրել նաև դիվանագիտական աջակցություն եվրասիական տարածաշրջանում և իսլամական երկրներում. Թուրքիան նաև որպես սիմվոլիկ ժեստ խոստացավ հատուկ նշանակության վտրիկ ջոկատ ուղարկել Աֆղանստան: Վաշինգտոնում տեղի ունեցած այդ հանդիպումներից ամերիկացիները չափազանց բավարարված էին, իսկ Փառետը գովաբանել էր Թուրքիային հակաահաբեկչական գործողություններին օժանդակելու հարցում ԱՄՆ-ի յուրաքանչյուր խնդրանքը բավարարելու համար: ԱՄՆ-ի պատրաստ էր հերթին այդ բանակցությունների արդյունքները մեկնաբանել եր որպես դիվանագիտական հաղթանակ և կանաչ լույս ավելի ակտիվ քաղաքականություն վարելու համար:

Թուրքիայի քաղաքականության հիմնական նպատակները որոշվեցին հոկտեմբերի 5-ին ԱՄՆ-ի հետ տեղի ունեցած Թուրքիայի նախարարների խորհրդի նիստին: Դրանք, ըստ մեր մեկնաբանության, հետևյալն էին.

- օգտագործել հակաահաբեկչական գործողություններում Թուրքիայի մասնակցությունը ԱՄՆ-ից ու ԵՄ-ից զիջումներ ստանալու նպատակով այնպիսի հարցերի կապակցությամբ, ինչպիսիք են Թուրքիայի լիիրավ անդամակցությունը ԵՄ-ին և ընդգրկումը Եվրոպական անվտանգության և պաշտպանության քաղաքականության (ESDP) որոշում կայացնող մեխանիզմներում, Կիպրոսի հիմնախնդիրը և ֆինանսական աջակցությունը միջազգային ֆինանսական կազմակերպություններից և ԱՄՆ-ից, ինչպես նաև ռազմական օգնություն ԱՄՆ-ից,

- օգտագործել ստեղծված իրավիճակը՝ Թուրքիայի քաղաքական և ռազմական ազդեցությունը եվրասիական պետություններում, ներառյալ Աֆղանստանում, ուժեղացնելու նպատակով:

Դրանից հետո Թուրքիայի քաղաքականությունն ընդունեց ընդգծված ակտիվ տեսք: Իշխանամետ «Turkish Daily News» օրաթերթը ամենայն հստակությամբ ընդգծեց, թե «թուրք հասարակությունը պետք է համոզվի, որ մենք կարող ենք և պետք է առանցքային դեր ունենանք ահաբեկչության

դեն պայքարում»¹⁹։ Ղեկավար դեր ստանձնելու նպատակով Թուրքիան իրականացրեց դիվանագիտական մի շարք մախաճեռնություններ, որոնցից կարելի է նշել Թուրքիայի առաջարկը այդ երկրում անցկացնել ԵՄ և Իսլամական Կոնֆերանս Կազմակերպության անդամ երկրների ներկայացուցիչների հանդիպում։ Այս մախաճեռնությունը հաստատվեց, սակայն դրա իրագործումը հետաձգվեց մինչև 2002 թ. փետրվար։ Իսկ Անկարայի առաջարկը՝ կազմակերպել հակաթալիբյան ուժերի հանդիպում Ստամբուլում Թուրքիայի հովանու ներքո, չիրականացավ հակաթալիբյան կոալիցիայի փուշտում անդամների բացասական դիրքորոշման հետևանքով, քանի որ մտավախություն կար, որ այդպիսով Թուրքիան նպատակ ունի ուժեղացնելու թյուրքալեզու ցեղերի դերը հետթալիբյան Աֆղանստանում։

2001 թվականի հոկտեմբերին Ջեմի այցը Ադրբեջան, Ուզբեկստան և Թուրքմենստան նպատակ ունեւր ցուցադրելու Անկարայի ներգրավվածությունը Եվրասիայում։ Այն, հակառակ թուրքական դիվանագիտության հաշվարկների, չբերեց շոշափելի արդյունքներ։ Արևմտյան լրատվական գործակալությունները մատնանշեցին այդ այցի «ամորոշ օրակարգի» հանգամանքը²⁰։ Իր այցի ընթացքում Ջեմը մեկ անգամ ևս, ինչպես 1990-ականների առաջին կեսին հաճախ էին անում Սիջին Ասիա ժամանող թուրք բարձրաստիճան պաշտոնյաները, փորձ կատարեց «թյուրքականության» զգացմունքներ արթնացնել տարածաշրջանի կառավարող էլիտայի ներկայացուցիչների շրջանում։ Աշխաբադում Ջեմը լրագրողների հետ գրույցի ընթացքում ասաց. «Մեծ ընտանիքի անդամները, որոնց արդեն այցելել եմ և կայցելեմ, այժմ ավելի լավ են հասկանում միմյանցից կախված լինելու հանգամանքը. դա է իմ այս այցի իմաստը»²¹։ Սակայն, ինչպես և 1990-ական թթ-ին, այդ մոտեցումը, ըստ դիտորդների, արձագանք չգտավ և արժանացավ բավական կտրուկ հակազդեցության²²։

Թուրքական դիվանագիտությունը նոր ակտիվություն ցուցաբերեց նաև Հարավային Կովկասում։ Փորձելով իր օգտին ծառայեցնել նոր աշխարհաքաղաքական իրավիճակը՝ Անկարան ջանքեր գործադրեց ստանալ ԱՄՆ-ի աջակցությունը և հավանությունը տարածաշրջանում երկու նոր մախաճեռնությունների համար։ Թուրքիան առաջարկեց ընդլայնել 2001 թ. սկզբին կնքված Անկարայի, Վաշինգտոնի և Թբիլիսիի միջև տնտեսական համագործակցության մախնական համաձայնագիրը՝ ներառելով նաև քաղաքական և ռազմական բնագավառները։ Ըստ Անկարայի այլ մախաճեռնության՝ առաջարկվում է ռազմական համագործակցություն հաստատել Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան առանցքով՝ պաշտպանելու համար Բաքու-Թբիլիսի-Ջեյհան խողովակաշարը։ Այդ գաղափարը առաջին ան-

գամ քննարկվել է 2000թ. Տրապիզոնում՝ Թուրքիայի և Վրաստանի արտգործնախարարներ Ջեմի ու Մենադարիշվիլու հանդիպման ընթացքում²³:

Այս նախաձեռնությունները հակասում են Կովկասյան կայունության պակտին, որը նախապես առաջարկվել էր նույն Ջեմի և նախկին նախագահ Մուլեյմսն Դեմիրելի կողմից: Նրանց առաջնային նպատակն էր մեկուսացնել Հայաստանը և թուլացնել Ռուսաստանի դիրքերը տարածաշրջանում: Հիշյալ նախաձեռնությունների միջոցով իրականում փորձ էր կատարվում խթանել հակաիմտեգրացիոն միտումները Հարավային Կովկասում, ինչը կարող է վտանգել տարածաշրջանի կայունությունը: Դրանք նաև չէին համապատասխանում այդ շրջանում ԱՄՆ-ի ստրատեգիական շահերին և չստացան ԱՄՆ-ի աջակցությունը:

Թուրքիան նաև ձգտում էր ակտիվ դեր ստանձնել Աֆղանստանի հետպատերազմյան կարգավորման գործընթացում: Թուրքական գործընթացը (մոտ հազար զինվոր) ընդգրկվեց միջազգային խաղաղապահ ուժերի կազմում: Սպասվում է, որ համաձայն իր բազմաթիվ խնդրանքների, 2002 թ. ամառվա սկզբին Թուրքիան խնդրո առարկա ուժերում կստանձնի դեկավար դեր: Տարածաշրջանում թուրքական ուժերի ճանաչումը որպես բազմազգ ուժերի առաջնորդող մաս կստեղծի մոտ, ավելի նպաստավոր իրավիճակ՝ Թուրքիայի իդները Կենտրոնական Ասիայում իր գերակշռող դերը վերականգնեցնելու առումով: Միաժամանակ, հարկ է նշել, որ Թուրքիայի հետսեպտեմբերյան քաղաքականությունը Կովկասում ավելի քիչ է հաջողվել. մասնավորապես, նա դեռ չի ստացել ԱՄՆ-ի հավանությունը իր վերը նշված նախաձեռնությունները ակտիվորեն իրականացնելու համար:

III

Որոշ դիտարկումներ Թուրքիայի հետսեպտեմբերյան քաղաքականության վերաբերյալ

Որոշումներ ընդունելու մեխանիզմը

Ժամանակակից Թուրքիայում արտաքին քաղաքականության ոլորտում որոշում կայացնելու գործընթացը որոշ առանձնահատկություններ ունի: Առաջին հերթին հարկ է նշել այդ գործընթացում զինվորականության մասնակցության հանգամանքը, հատկապես Ազգային անվտանգության խորհրդում (ԱԱԽ) ռազմավարական կարևորության հարցեր քննարկելու ժամանակ, ուր զինվորականությունը վայելում է վերջնական խոսքի անառարկելի իրավունք: ԱԱԽ-ի աշխատակազմը կարևոր որոշումների համար պատրաստում է նախագծեր՝ օգտագործելով ԳՄ-ից և ԱԳՆ-ից

ստացված հանձնարարականները:

ԱԳՆ-ի աշխատակազմը պատասխանատու է առօրյա որոշումների համար, իսկ ավելի կարևոր որոշումների համար ԱԳՆ-ի միջին օղակի ներկայացուցիչները սովորաբար խորհրդակցում են ԳՄ-ի իրենց գործընկերների հետ: Այս մեխանիզմը գործի է դրվել 1980 թ. զինվորական հեղաշրջումից հետո և անխափան գործեց անցյալ երկու տասնամյակներին: Այն խախտվել է միայն Ծոցի պատերազմի ժամանակ, երբ նախկին նախագահ Թուրգութ Օզալը իր ձեռքը վերցրեց հսկողությունը և ստիպեց պաշտոնաթող լինել և՛ արտգործնախարարին, և՛ ԳՄ պետին: Ներկա ճգնաժամի ընթացքում վարչապետ Էջևիթը փորձեց ձևափոխել այդ մեխանիզմը: Սեպտեմբերի 11-ից հետո կարևոր հարցերը քննարկվում էին քաղաքացիական և զինվորական բարձրաստիճան պաշտոնյաների խորհրդակցություններում, ինչպես նաև նախարարների խորհրդի նիստերին: Սակայն զինվորականության վերնախավը անվտանգության հետ կապված քաղաքականության մեջ պահպանեց իր առաջնային դերը, քանի որ սեպտեմբերի 12-ին ԱԱԽ-ի կառույցի ներքո ստեղծվեց ճգնաժամի կարգավորման կենտրոն, որի առջև նպատակ դրվեց հետևել իրադարձություններին և հանդես գալ համապատասխան առաջարկներով:

Այնուամենայնիվ, սեպտեմբերի 11-ի ահաբեկչական հարձակմանը հաջորդած առաջին մի քանի օրերին որոշում կայացնելու գործընթացի արդյունավետությունը հարցականի տակ էր: Ըստ թուրքական մի օրաթերթի՝ «կառավարությունը կարողացավ ըմբռնել սեպտեմբերի 11-ի ողբերգությունը միայն մեկ շաբաթ անց»²⁴: Սակայն հետագայում թուրքական հասարակայնությունը հակված էր ավելի դրական գնահատելու այն:

Կովկասում թուրքական դիվանագիտությունը սխալներ թույլ տվեց՝ մասնավորապես վերոհիշյալ նախաձեռնությունները հրապարակ հանելով: Տեղին է նշել, որ նախկին նախագահ Սուլեյման Դեմիրբելը չվարանեց հրապարակայնորեն քննադատել խնդրո առարկա նախաձեռնությունները և վերահաստատել Հարավկովկասյան կայունության պակտի վերաբերյալ իր առաջարկը, հատուկ նշելով նրա մեջ Հարավային Կովկասի բոլոր պետությունները ընդգրկելու անհրաժեշտությունը:

Թուրքիայի արտաքին քաղաքականության ստրատեգիական պլանավորումը կատարվում է ԱԳՆ-ի, նրա վերլուծական դեպարտամենտի ու ստրատեգիական վերլուծությունների ինստիտուտի կողմից, ինչպես նաև փաստորեն նրան կից գործող այնպիսի հետազոտական կենտրոնների կողմից, ինչպիսիք են ASAM-ը և TESEV-ը, որոնց ղեկավար կազմի կորիզը կազմում են նախկին բարձրաստիճան դիվանագետները²⁵: Սակայն հետսեպտեմբերյան գործընթացները դրդեցին բարձրագույն զինվորականությանը ստեղծել իր անմիջական հսկողության տակ գտնվող ստրա-

տեգիական հետազոտությունների կենտրոն՝ SAREM-ը, որի տնօրենը գեներալ է²⁶։ Բավական հատկանշական փաստ է. ըստ ամենայնի, զինվորական վերնախավը լիովին չի վստահում երկրի քաղաքական ղեկավարությանը և պատրաստվում է ընդլայնել իր դերը արտաքին քաղաքականության ստրատեգիական պլանավորման ոլորտում։

Ներքին գործոններ

Թուրքիայի հասարակական կարծիքը գերակշռող մեծամասնությամբ դեմ էր Աֆղանստանում ԱՄՆ-ի զլխավորած պատերազմին՝ մոտ 70%-ը դեմ էր ռազմական գործողություններին, իսկ 90%-ը՝ Աֆղանստան թուրքական զորքեր ուղարկելուն²⁷։ Սակայն հասարակությունը հազվադեպ է ընդդիմանում կառավարության քաղաքականությանը, իսկ հակակառավարական և հակամեծերիկյան բողոքի ցույցերը փոքրաթիվ էին։ Այս փաստը բացատրվում է այսօրվա Թուրքիայում իսլամամետ քաղաքական ուժերի պառակտվածությամբ ու թուլությամբ, ինչպես նաև արմատական ազգայնական՝ պանթուրքիստական խմբերի ու խմբավորումների ազդեցության աճով։ Եթե իսլամիստները որոշ զգույշ վարձեր կատարեցին քննադատելու կառավարության «հակաիսլամական» քայլերը, ապա շատ պանթուրքիստական կազմակերպություններ պաշտպանեցին Եվրասիայում թուրքական ազդեցության ընդլայնման կառավարության քաղաքականությունը։

Իրաքի խնդիր

Թուրքիայի քաղաքացիական և զինվորական ղեկավարությունը հաստատում կերպով բազմիցս հայտարարել է, որ դեմ է Իրաքի դեմ որևէ ռազմական գործողության ծավալմանը։ Թուրքիան մտավախություն ունի, որ Իրաքի փլուզումը կնպաստի Հյուսիսային Իրաքում քրդական պետության կազմավորմանը, որը կխթանի նաև Հարավարևելյան Թուրքիայի քրդերին պահանջել քաղաքական անկախություն։ Բնականաբար, այդպիսի զարգացումը Թուրքիայի համար անընդունելի է։

Իրականում Անկարան չունի բավարար լծակներ Իրաքի վրա ԱՄՆ-ի հարձակումը կանխելու համար, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ Մադամ Հուսեյնի դեմ ռազմական գործողությունների ծավալման դեպքում Թուրքիան կուղարկի իր զորքերը Իրաքի հյուսիսային շրջան և կվտրճի իր շահերին ծառայեցնել Մոսկվի շրջակայքում ապրող թյուրքախոս փոքրամասնությանը։ Թուրքիան, ըստ ամենայնի, ձգտելու է մուտք ստանալ դեպի իրաքյան նավթահանքերը և իր համար տեղ ապահովել Իրաքի ապագա

քարտեզը գծողների շարքում: Իսկ դրան կարելի է հասնել միայն ռազմական գործողություններին մասնակցելով: Հավանաբար, այդ նկատառումներից ելնելով, Թուրքիան դեկտեմբերի սկզբին Հյուսիսային Իրաքում 500 զինվորից բաղկացած հատուկ ստորաբաժանում և ավելի քան 120 տանկ տեղակայեց՝ այսպիսով զգալիորեն ավելացնելով արդեն իսկ այնտեղ տեղակայված զորքերի և զինվորական տեխնիկայի թվաքանակը²⁸:

Թուրքիայի 2001թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների քաղաքականության վերլուծությունը հնարավորություն է տալիս հանգելու հետևյալ եզրակացության. մեր հարևան պետությունը ձգտում է, ակտիվ դերակատարություն ստանձնելով սեպտեմբերի 11-ի ահաբեկչական գործողության հետևանքով աշխարհում և մասնավորապես Եվրասիայում ընթացող գործընթացներում, ընդլայնել իր ազդեցության ոլորտները: Թե որքանով դա կհաջողվի, ցույց կտա ժամանակը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Cumhuriyet, 23. 01. 1992.
2. Sbu. Turkish Foreign Policy, – <http://www.mfa.gov.tr/>:
3. Özey R. Jeopolitik ve Jeostrategik Açidan Türkiye. Istanbul, 1998, s. 57–59.
4. Yılmaz M. Türkiyenin Jeo–Stratejisi Açısından Günümüz Olaylarının Değerlendirilmesi. – Üçüncü 1000'E Girerken Türkiye: Kutlu Doğum Sempozyumu – 1999. Yayına Hazırlayan: Ömer Turan. Ankara, 2000, s. 72.
5. Sander O. Turkish Foreign Policy: Forces of Continuity and Change. – Turkish Review, Winter 1993, Volume 7, Number: 34, pp. 45–46.
6. Perinçek D. Avrasya Seçeneği: Türkiye İçin Bağımsız Dış Politika Istanbul, 1996.
7. Թուրքիայի բարձրագույն զինվորականության մոտեցումները և ընկալումները լավագույնս արտահայտված են Գլխավոր շտաբի նախկին հրամանատար Նեջիփ Թորումթայի գրքում: Տե՛ս Torumtay N. Değişen Stratejilerin Odagında Türkiye. Istanbul, 1996:
8. Ergüvenç S. Turkey's Strategic Importance in Military Dimension: A Regional Balance Holder. – Turkey at the Threshold of the 21st Century: Global Encounters and/vs Regional Alternatives. Ed. By: Mustafa Aydın. Ankara, 1998, p.63. Հեղինակն, ըստ երևույթին, Հայ–թուրքական հաշտեցման հանձնաժողովի անդամ է:
9. Տե՛ս այդ մասին. Ögüt K. Avrasya Stratejileri Üzerine. – Aydınlanma 1923, Sayı: 21 (հնտերնետային տարբերակ):
10. Տե՛ս, օրինակ, նրա համապատասխան հայտարարությունը, որը տպագրված է հետևյալ պարբերականի էջերում. Avrasya Dergisi, II, (հնտերնետային տարբերակ):

11. Տե՛ս. Ögüt K. Avrasya Stratejileri Üzerine. – Aydınlanma 1923, Sayı: 21 (ինտերնետային տարբերակ).
12. Gökey B., Langhorn R. Turkey and the New States of the Caucasus and Central Asia. London, 1996, p.2.3.
13. 1990–ականների Թուրքիայի եվրասիական քաղաքականության հետազոտումը սույն հոդվածի խնդիրը չէ:
14. Այդ խնդիրներին համգամալից անդրադարձել ենք 2001 թ.: Տե՛ս. Safrastian R. Armenia must get rid of its complex of Russia's younger brother. – The Noyan Tapan Highlights, 2001, 19 July, pp. 6, 8; Safrastian R., Turkey finds it possible to peddle influence in the South Caucasus. – The Noyan Tapan Highlights, 2001, 27 September, pp. 8, 15; ինչպես նաև, Ռ. Աաֆրաստյան, Թուրքիան՝ աշխարհաքաղաքական փնտրտուքի մեջ, «Երկիր», 21 սեպտեմբերի, 2001:
15. Hürriyet, 14. 09. 2001.
16. Milliyet, 2. 10. 2001.
17. Star, 2. 10. 2001.
18. Milliyet, 28. 09. 2001.
19. Turkish Daily News, October 15, 2001.
20. Տես Steve Bryant. Turkey woos ex-Soviet states over Afghan crisis. – In: Reuters English News Service, 10/22/2001.
21. Ibid.
22. Ibid.
23. Turkish Daily News, 18. 10. 2001.
24. Türkiye, 15. 10. 2001.
25. Փաստորեն, բոլոր այդ կառույցները ստեղծվել են մախորդ տասնամյակում, երբ կտրուկ փոխվեց Թուրքիայի արտաքին քաղաքական միջավայրը: Նույն տարիներին հիմնադրվեցին նաև մի շարք այլ վերլուծական կենտրոններ, որոնց մի մասը ֆինանսավորվում է այլևայլ քաղաքական ուժերի ու գործարար շրջանակների կողմից և այդպիսով դուրս է մնում կառավարության անմիջական հսկողությունից:
26. Milliyet, 27. 12. 2001.
27. Turkish Daily News, 4. 10. 2001.
28. Տես Özgür Politika, 7. 12. 2001.